ՍԲՍՊԵ

ԳԼՈՒԽ 2

Քաղաքը, որտեղ ամեն ինչ հնարավոր է

Այն չնկատելն անհնար է: Փարիզ տանող A3 մայրուղով անցնելիս ուղիղ դիմացդ է հայտնվում: Վիթխարի դիմանկար է: Ամբողջովին զբաղեցնում է Résidence des Potagers-ի ութհարկանի շենքի կողային չորս հարկը: Պատկերում կանաչ տերևներ ու թռչող ֆուտբոլային գնդակներ են: Կենտրոնում՝ խորաթափանց հայացքով Կիլիան Մբապեն ցույց է տալիս «շակա» նշանը՝: Հագին «Պարի Սեն Ժերմենի» մարզաշապիկ է, վրան՝ կարգախոս. «Բոնդի. քաղաք, որտեղ ամեն բան հնարավոր է»: Հսկայական դիմանկարը վերից հսկում է մեքենաներով ու խցանումներով ծանրաբեռնված մայրուղին: Այն հետևում է Գեներալ Գալիենեի պողոտային (նախկինում՝ RN3),

* Ձեռքի ժեստ՝ բութ մատն ու ցկույթը բացած, մյուս մատները՝ փակած, հաճախ թեթև թափահարումով, որը խորհրդանշում է հանգստություն, բարեկամություն կամ երախտագիտություն (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Luca Caioli
Cyril Collot

MBAPPÉ

Լուկա Կայոլի
Սիրիլ Կոլո

ՄԲԱՊԵ

Ֆուտբոլի նոր դարաշրջանի լեգենդը

Թարգմանությունն անգլերենից՝
Անի Հակոբյանի

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578
Կ 190

Կայոլի Լուկա, Կոլո Սիրիլ
Կ 190 Մբապե / Լ. Կայոլի, Ս. Կոլո.- Եր.: Newmag, 2025.- 280 էջ:

Կիլիան Մբապեն Բոնդի արվարձանից հասավ աշխարհի ֆուտբոլային բեմ: Նա դարձավ պատմության մեջ ամենաթանկ պատանի խաղացողը, աշխարհի գավաթակիր հռչակվեց 19 տարեկանում: Իր կայծակնային արագությամբ, խաղադաշտում սառնասիրտ գործողություններով և ֆուտբոլի հանդեպ նվիրումով դարձավ սերնդի խորհրդանիշ և նոր ժամանակների լեգենդ: Լուկա Կայոլին և Սիրիլ Կոլոն ներկայացնում են Մբապեի ճանապարհը մանկությունից մինչև մեծ ֆուտբոլ, Մոնակոյից մինչև ՊՍԺ, Աշխարհի առաջնության եզրափակիչներում հաղթանակից մինչև երազանքի տապալում: Այս գիրքը մեծ նպատակի, համառ աշխատանքի և երբեք չհանձնվելու մասին է: Այն ոգեշնչում է երազել ու գրոհել հաղթանակի դարպասը:

ՀՏԴ 796.332
ԳՄԴ 75.578

ISBN 978-9939-967-91-2
© Luca Caioli & Cyril Collot, 2024.
Լուկա Կայոլի, Սիրիլ Կոլո, «Մբապե» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Գլուխ 1 Ալե դը Լիլա 7
Գլուխ 2 Քաղաքը, որտեղ ամեն ինչ հնարավոր է 15
Գլուխ 3 Օ՜ լա-լա 26
Գլուխ 4 Նոր գրավչությունը 39
Գլուխ 5 Եվ հաղթել է... 50
Գլուխ 6 Մղձավանջ՝ դրախտում 59
Գլուխ 7 Թիերի Անրիից էլ լավը 69
Գլուխ 8 Պատվով հաղթահարած փորձություն 80
Գլուխ 9 Հայտարարությունը 91
Գլուխ 10 «Լուի 2-րդ» մարզադաշտ, հոկտեմբերի 21, 2016 100
Գլուխ 11 Միջազգային ասպարեզում 108
Գլուխ 12 Արդեն չեմպիոն 118
Գլուխ 13 Ամառային սագան 126
Գլուխ 14 Օգոստոսի 31, 2017 143
Գլուխ 15 Դոնատելլո 157
Գլուխ 16 MCN 166
Գլուխ 17 Ոսկե տղան 178
Գլուխ 18 Հեթ տրիկ՝ Ռոնալդուին ստվերելու համար 189
Գլուխ 19 Պելե արքայի հարևանությամբ 198
Գլուխ 20 Տղան մեծանում է 208
Գլուխ 21 Անավարտ մրցաշրջան 221
Գլուխ 22 Մեն-մենակ 231
Գլուխ 23 Գրեթե Մեսսի 245
Գլուխ 24 Կիլիանը Փարիզն է 257
Գլուխ 25 Մենք կվերադառնանք 266

Երախտագիտության խոսք 276

ԳԼՈՒԽ 1

Ալե դը Լիլա

Այցի մասին նրան նախապես էին ասել: Լավ պատրաստվել է: Որոշ մտքեր է գրի առել: Ուզում է որպես առաջ կարդալ դրանք, բայց տատն ասում է, որ սպասի, դեռ կհասցնի: Հիմա դրա ժամանակը չէ. ահռելի մեծ հեռուստացույցով փոքր հյուրասենյակում տատն ու պապը հյուրերի հետ զրուցում են և սուրճ խմում: Նա նայում է նոթատետրին, որը դրել է սեղանին, լսում ու երբեմն էլ խառնվում է խոսակցությանը: Վերջապես թույլտվություն է ստանում, հետն էլ հորդոր՝ կարդալ բարձր ու բառերը հստակ արտաբերել:

«Ողջո՛ւյն: Կիլիանն ամենալավն է: Նա Բոնդիի հերոսն է: Բոլորը սիրում են նրան: Ոգեշնչման աղբյուր է ֆուտբոլ խաղացող բոլոր երեխաների համար: Շատ լավն է: Ուիլֆրիդն ու Ֆայզան լավ են դաստիարակել իրենց երեխաներին: Նրա եղբայր Էթանը կգնա Կիլիանի հետքերով»:

Իդրիսն ինը տարեկան է. դպրոց է գնում, ֆուտբոլ խաղում մինչև 10 տարեկանների թիմում և մի երկու խոսքով ի մի բերում, թե ով ինչ է մտածում Բոնդիում՝ սկսած Madame la Maire-ից՝ տիկին քաղաքագլխից, վերջացրած մի քանի հարյուր մետր այն կողմ գտնվող «Լեո Լագրանժի» խաղադաշտում մարզվող երեխաներով:

Իդրիսն Էլմիր և Պիեռռ Ռիկլենների թոռնիկն է: Ռիկլենները Մարտինիկայից Ֆրանսիա են եկել 1970-ականներին: Նրանք ապրում են Ալե դը Լիլայի 4-րդ համայնքային սպիտակ շենքի առաջին հարկում: 1950-ականներին կառուցված հինգհարկանի շենքը Բոնդիի կենտրոնում է՝ ծառաշատ ու անաղմուկ փողոցում: Ոմանք փողոցների անունների շնորհիվ Բոնդին կոչում են Cité de Fleurs՝ Ծաղիկների քաղաք: Մբապեների ընտանիքն այստեղ ապրելու եկավ 1998-ի աշնանը: Առաջին աստիճանավանդակը բարձրանալուն պես փոստարկղ կա, որի վրա դեռ գրված է՝ Լամարի-Մբապե Լոտեն. ձախից՝ 2-րդը:

«Նրանք տեղափոխվեցին հենց մեր վերևի հարկի բնակարան,– ասում է Էլմիրը, – ճիշտ մերի նման էր՝ 56 քառակուսի մետր, հյուրասենյակ, «Լեո Լագրանժ» մարզադաշտին նայող փոքրիկ խոհանոց ու երկու ննջասենյակ: Երբ եկան, Ֆայզան հղի էր Կիլիանով, վերջին ամիսներն էին»:

Ֆայզան այն ժամանակ 24 տարեկան էր: Նա ծագումով Ալժիրից է, հասակ է առել Բոնդիի հյուսիսում՝ Տեր Սեն Բլեզ թաղամասում: Սովորել է Ժան Ջեի քոլեջում ու հաճախել հենց տան դիմաց գտնվող մարզասրահ: Տասներկու և տասներեք տարեկանում, նախքան հենդբոլի վրա կենտրոնանալը, բասկետբոլ է խաղացել: Դիվիզիոն 1-ում «Բոնդի» հենդբոլի ակումբի կազմում աջ եզրային էր:

«Նա 1990-ականների վերջին ամենաներքևից է սկսել ու դարձել «Բոնդիի» լավագույն հենդբոլիստուհիներից մեկը: Ֆայզան խարիզմա ուներ: Թիմի առաջնորդներից մեկն էր, գերտաղանդավոր և նույնքան էլ կոշտ»,– հիշում է ընտանիքի բարեկամներից մեկը:

«Խաղադաշտում նա լավ մարտիկ էր, բայց նաև տաքգլուխ էր: Նրան հունից հանելու համար շատ բան պետք չէր, և այնքան էլ բարեհամբույր չէր մրցակիցների հանդեպ: Մի անգամ առնչվեիր Ֆայզայի հետ, ընդմիշտ կհիշեիր,– Le Parisien-ին տված հարցազրույցում մտաբերում էր Ժան-Լուի Կիմունը՝ ակումբի երբեմնի տնօրենն ու նախագահը, – բայց խաղադաշտից դուրս նա միշտ էլ շատ բարի ու հաճելի մարդ է եղել և հիմա էլ այդպիսին է»:

«Խոսել շատ է սիրում: Միշտ ինչ-որ կատակ էր անում: Որպես մարզիչ՝ երեք-չորս տարի նրա հետ աշխատել եմ Մորիս Պետիժան և Բլանկի թաղամասերում, չորեք շաթբի օրերին և դպրոցական արձակուրդների ժամանակ էլ՝ համայնքային կենտրոններում: Հենց այնտեղ էլ նա հանդիպեց Ուիլֆրիդին, որը նույնպես մարզիչ էր աշխատում կրտսեր եղբոր՝ Պիեռի և Ալեն Մբոմայի հետ: Ալենը 2000 թ. Աֆրիկայի տարվա ֆուտբոլիստ Պատրիկ Մբոմայի մեծ եղբայրն էր: Երկուսն էլ սիրում էին սպորտը, սիրում էին մարդկանց հոգու հետ խաղալ և ուժեղ բնավորություն ունեին: Նրանք, անշուշտ, պետք է գրավեին իրար»,– բացատրում է զույգի ընկերներից մեկը:

Ուիլֆրիդը 30 տարեկան էր, երբ Ֆայզայի հետ տեղափոխվեց Ալե դը Լիլա: Ծնվել էր Կամերունի Դուալա քաղաքում և Ֆրանսիա էր եկել ավելի լավ կյանքի հետևից: Բոբինյիում մի քանի տարի ապրելուց հետո նա հաստատվեց Բոնդիի

հյուսիսային հատվածում, որտեղ տարիներ շարունակ ֆուտբոլ էր խաղում:

«Նա լավ խաղացող էր, 10-րդ համարը, կիսապաշտպան, որը սիրում էր գնդակ պահել,– ասում է Ժան-Ֆրանսուա Սյունեը՝ «Բոնդի» ֆուտբոլային ակումբի տեխնիկական տնօրենը, որը հայտնի է Ֆանֆան անունով: – Նա կարող էր կարիերա անել: Ակումբում բավականին առաջ գնաց, հետո երկու տարի Պատվո դիվիզիոնում խաղաց՝ հարևան ակումբի՝ «Բոբինյիի» կազմում: Երբ ավարտեց խաղային կարիերան, վերադարձավ մեզ մոտ: Մենք նրան աշխատանք առաջարկեցինք, և նա ամբողջությամբ նվիրվեց երիտասարդ խաղացողներին նախ որպես մարզիչ, ապա՝ որպես սպորտային տնօրեն: Միասին աշխատեցինք գրեթե 30 տարի՝ սկսած 1988-89 մրցաշրջանից, և վերաձևեցինք ակումբը: Նա հեռացավ 2017-ի հունիսին»:

Դեկտեմբերի 20, 1998

Հինգ ամիս ու մի քանի օր էր անցել հանրահայտ «Մեկ, երկու, երեք, զրոյից». Աշխարհի առաջնության եզրափակիչում Զինեդին Զիդանի՝ գլխով երկու հարվածներից և Էմանուել Պետիի վճռորոշ գոլից, որոնք Ֆրանսիային բերեցին հաղթանակ Բրազիլիայի նկատմամբ, և որի առաջատար Ռոնալդոն այդ ժամանակ վատառողջ էր: Այդ կիրակիի՝ հուլիսի 12-ի հուշերը և համընդհանուր խանդավառությունը դեռևս թարմ էին: Ինչպե՞ս կարելի էր մոռանալ Ելիսեյան դաշտերում հավաքված, ուրախությունից արբեցած, հաղթական երգեր երգող մեկուկես միլիոն մարդու ցնծությունը:

«Black-blanc-beur» (Սև-սպիտակ-հյուսիսաֆրիկացի), ամբոխը երգում էր՝ «ԶիզոՒ նախագահ»: Ֆրանսիական սպորտի

պատմության մեջ այս մեծագույն հաղթանակը մոռանալն անհնար էր: Տրամաբանական էր, որ ֆուտբոլով օրհնված այդ տարում Ֆայզան և Ուիլֆրիդը սուրբծննդյան ամենալավ նվերը պետք է ստանային՝ իրենց առաջնեկին: Նա ծնվեց դեկտեմբերի 20-ին և կնքվեց Կիլիան Սանմի Մբապե Լոտեն անունով (Ադեսանմիի կարճ տարբերակը, որը յորուբա լեզվով նշանակում է «Թագն ինձ համար է»): Մբապե ազգանունը ենթադրությունների տեղիք պետք է տար. Կիլիանը 1950 և 60-ականների կամերունցի կիսապաշտպան Մարշալ մականունով Սամյուել Մբապե Լեպպեի թո՞ռն է: Դուալայից բաս կիթառահար Էտյեն Մ'Բապեի ազգակա՞նը: Ո՛չ, բացատրում էր Պիեռ Մբապեն, կապ չկար. Կամերունում Մբապե ազգանունը նույնքան տարածված է, որքան Դյուպոնը՝ Ֆրանսիայում, կամ էլ Մարտինը՝ Միացյալ Թագավորությունում:

Պիեռը Կիլիանի հորեղբայրն է, ֆուտբոլիստ, որը մարզվել է «Ստադ դը Լեստում», ապա խաղացել է «Լևալուա», «Վիլմոմբլ» և «Իվրի» ակումբներում:

Նա հիվանդանոց սլացավ՝ զարմիկին տեսնելու: Նորածնին մինի ֆուտբոլ էր տարել նվեր: Ֆայզային ու եղբորը կատակով ասաց. «Կտեսնեք՝ մի օր նա մեծ ֆուտբոլիստ է դառնալու»:

Ուրախալի իրադարձությունից մի քանի օր անց մայր ու որդի տուն եկան: Ֆայզան աշխատանքի վերադարձավ Բոբինյիի քաղաքապետարանում, մինչդեռ Ուիլֆրիդը պետք է միայն փողոցը հատեր՝ «Լեո Լագրանժ» խաղադաշտ հասնելու և երեխաներին մարզելու համար: Մասնավորապես կարմեկը, որը գրավում էր նրա ուշադրությունը: Տասնմեկամյա տղան հինգ տարի առաջ էր Բոնդի եկել Կինշասայից՝ այն ժամանակվա Զաիրից (այժմ՝ Կոնգոյի Դեմոկրատական

Հանրապետություն): Տղայի հայրենիքում վիճակը ծանր էր, ուստի ծնողները որոշել էին նրան Ֆրանսիա ուղարկել՝ ուսում ստանալու և ապագա կառուցելու համար: Նրա անունը Ժիրես Կեմբո-Էկոկո էր: Հայրը Զաիրի հավաքականի կիսապաշտպան Ժան Կեմբոն էր, որը հայտնի էր «Monsieur But» (Պարոն գոլ) անունով: Նա երկու անգամ նվաճել էր Աֆրիկայի ազգերի գավաթը (1968, 1974), 1973-ին Մարոկկոյին խփել էր երկու գոլ, ինչի շնորհիվ նրա երկրի ընտրանին դարձել էր Ենթասահարյան Աֆրիկայում առաջին թիմը, որն Աշխարհի առաջնության ուղեգիր էր նվաճել (Գերմանիա, 1974): Ժանը տղային Ժիրես էր անվանել ի պատիվ ֆրանսիացի կիսապաշտպան Ալեն Ժիրեսի, որով հիանում էր, ուստի նրան ուղարկեց Ֆրանսիա՝ քեռու և իր ավագ քրոջ հետ ապրելու: 1999-ին Ժիրես Կեմբո-Էկոկոն առաջին անգամ որպես խաղացող գրանցվեց «Բոնդի» ֆուտբոլային ակումբում: Ուիլֆրիդը նրա առաջին մարզիչն էր և շուտով դարձավ նաև օրինական խնամակալն ու հայրը:

«Դժվար է բացատրել, բայց այդ մարդն ասես միշտ իմ ճակատագիրն է եղել»,– տարիներ անց ասել էր Ժիրեսը: Լամարի-Մբապե Լոտենների ընտանիքը նրան տուն տարավ: Պաշտոնապես չորդեգրեցին, բայց նա միշտ Ֆայզային և Ուիլֆրիդին «մամ» ու «պապ» էր կոչում, քանի որ հենց նրանք էին նրան սեր տվել, օգնել դուրս գալ սոցիալական ծանր վիճակից և դառնալ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ: Ժիրեսը տեղափոխվեց Ալեդը Լիլա և դարձավ փոքրիկ Կիլիանի ավագ եղբայրը, իդեալը, կուռքն ու ֆուտբոլային առաջին հերոսը: Հարևանները հիշում են, որ նրանք մեծ սիրով էին հանգստյան օրերին տուն գալիս Կլերֆոնտեն ակադեմիայից, կամ Ֆայզան ու Ուիլֆրիդը շատ հաճախ էին տղային տանում կարևոր խաղերի:

«Նրանք համերաշխ ու ջերմ ընտանիք էին, բարի և համեստ մարդիկ»,– ասում է Պիեռոն:

«Մենք Ուիլֆրիդին հաճախ չէինք տեսնում, քանի որ աշխատանքի էր լինում, բայց Ֆայզային պարբերաբար հանդիպում էինք սանդղահարթակի վրա կամ մոտակա խանութում: Տեսել ենք Կիլիանի մեծանալը: Հենց սկսեց քայլել, գնդակով դմփդմփացնում էր իմ աղջիկների ննջասենյակի ճիշտ վերևի հարկում: Կիրակի առավոտները նրա սենյակը կարծես ֆուտբոլի դաշտ լիներ»,– ժպիտով հիշում է Էլմիրը:

«Ֆայզային ինչքան հանդիպում էի, անդադար ներողություն էր խնդրում: Ասում էի՝ ամեն ինչ կարգին է, չէ՞ որ երեխային տեղում պահելը հեշտ չէ: Այն ժամանակ էլ պարզ էր, որ նրա ուշքն ու միտքը ֆուտբոլն էր»:

Մի զվարճալի պատմություն էլ տատիկն է հիշում: Սուրբ Ծնունդի թե նրա ծննդյան առթիվ վերևի հարկի հարևան տղային՝ Կիլիանին, նվիրել էին աֆրիկյան ջեմբե թմբուկ: «Անընդհատ հարվածում էր դրան: Երկար ժամանակ տարված էր իր նոր խաղալիքով: Չհաշված թմբուկն ու ֆուտբոլը՝ Կիլիանը սքանչելի, դաստիարակված տղա էր: Ամեն անգամ հանդիպելիս ասում էր «ողջույն» կամ «բարի երեկո»: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալը չենք տեսել: Կարծես ընտանիքի փոքրիկի՝ Էթանի ծնվելուց հետո էր, որ 2006-ին տեղափոխվեցին քաղաքի հարավային թաղամաս: Այն երկաթգծի հակառակ կողմում էր՝ դեպի Լե Կոկտիե կայարան: Մենք նրան այստեղ անցած տարի մայիսին հանդիպեցինք: Վերադարձել էր հարազատ մարզադաշտ՝ Ֆրանսիայի չեմպիոնությունը նշելու համար: «Բոնդի» ակումբի բոլոր երեխաները այնտեղ էին, «Շնորհակալ ենք, Կիլիան: Բոնդին

քո կողքին է» գրությամբ պլակատ էին պարզել: Իսկապես հուզիչ էր: Կիլիանը երեխաներին շապիկներ նվիրեց, Իդրիսը նույնիսկ հաջողեցրել է լուսանկարվել նրա հետ»:

«Բարեբախտաբար Ֆայզան մեզ նկատեց ու ձայն տվեց՝ սպասե՛ք, սպասե՛ք, նա իմ հարևանն է. այդպես հայտնվեցի միկրոավտոբուսում և ունեցա այն լուսանկարը, որը մայրս փայփայում է»,– բացատրում է թոռնիկը:

«Այդ առիթով նամակ գրեցինք այստեղի երեք այլ ընտանիքների, նաև առաջին հարկի մեր հարևանների՝ Դանիել ու Կլոդին Դեզրամեի անունից»:

Էլմիրը վեր է կենում սեղանի մոտից, քայլում դեպի սենյակի անկյունը, բացում մի դարակ և թղթերի կույտի մեջ սկսում փնտրել: Վերջապես բացականչում է. «Ահա՛, գտա՛»:

«Սիրելի՛ Կիլիան,
Հույս ունենք, որ քեզ համար անսպասելի չի լինի, եթե ոչ պաշտոնական տոնով դիմենք քեզ: Մեզ համար դու դեռ այն լավ դաստիարակված տասնամյա տղան ես, որին հաճախ հանդիպում էինք Ալե դը Լիլա 4-ի աստիճանահարթակին: Այսօր դու ֆուտբոլային մեծ աստղ ես և փայլում ես խաղադաշտում: Մենք մեծ ուրախությամբ հետևում ենք քո սպորտային կարիերայի փայլուն հաջողություններին: Շատ հաճախ ենք խոսում քո և ծնողներիդ մասին, որոնց շատ էինք սիրում: Նրանք հիանալի դաստիարակություն են տվել քեզ: Ամեն անգամ, երբ խաղակոշիկներիդ քուղերը կապես, հիշի՛ր՝ քո հարևանները քո ամենամեծ երկրպագուներն են:
Ամենաջերմ բարեմաղթանքներով՝ քո ապագայի համար»:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark